600.0271.21.06.17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

21 հունիսի 2017 թվականի №271Ա
ք. Երևան

## «ԶՈՎԱՇԵՆ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0090 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի №51Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 30-րդ և 35-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ԶՈՎԱՇԵՆ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի մայիսի 24-ի №49 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հուլիսի 31-ի «Զովաշեն ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Զովաշեն» հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №51Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0090 լիցենզիայի գործողության ժամկետը՝ Որոշման 1-ին կետում «15 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2032 թվականի հուլիսի 31-ը» բառերով:

2. Որոշման՝

   1) 1-ին կետում «գյուղում գտնվող «Զովաշեն» հիդրոէլեկտրակայանում» բառերը փոխարինել «համայնքի վարչական տարածքում կառուցված «Զովաշեն» փոքր հիդրոէլեկտրակայանում» բառերով.

2) 2-րդ կետով հաստատված՝ Ընկերության «Զովաշեն» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0090 լիցենզիայի պայմանները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 31-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 հունիսի 2017թ.